ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2014թ. նոյեմբերի 14 թիվ 118- Ա

2014 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՊԼԱՆԱՅԻՆ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 12-ի N 624 որոշմամբ սահմանված հավելվածի 14-րդ կետի <<ե>> ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2014 թվականի մարտի 25-ի N 38-Ա կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի ներկայացրած արձանագրությունները ***որոշում եմ՝***

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի՝ Քուչակ, Կայք, Դավթաշեն, Ծաղկահովիտ, Բազմաղբյուր, Փարպի, Ոսկեթաս, Ն.Բազմաբերդ, Կոշ, Արագածավան և Եղնիկ համայնքների ղեկավարներին՝ վերացնել քաղաքաշինական բնագավառի պլանային ստուգումների արձանագրություններում նշված խախտումները:

2.Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա. Դավայանին:

Ս.ՍԱՀԱԿՅԱՆ